ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ԽՈՐՀՐԴԻ) ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք.Երևան 04 փետրվարի 2020թ.

ՀՀ շրջակա միջավայրի նախարար, Խորհրդի նախագահ՝ Է.Գրիգորյանի 2020 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ հրավիրվել է Խորհրդի հեռակա քվեարկությամբ անցկացվող արտահերթ նիստ, որի քվեարկությունը սկսվել է 2020 թվականի փետրվարի 3-ին և ավարտվել 2020 թվականի փետրվարի 4-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Է. Գրիգորյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Ս. Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա. Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ս. Գալյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Գ. Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)
Պ. Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն (համաձայնությամբ)
Ս. Ադամյան	«Բնապահպանական հասարակական միություն» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)

2020 թվականի փետրվարի 1-ին Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին ուղարկվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2019 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարին Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին հատկացված բյուջետային միջոցների շրջանակում տնտեսագիտական դասակարգման ներհոդվածային և մինչև 2 մլն ՀՀ դրամը չգերազանցող միջհոդվածային փոփոխություններ կատարելու լիազորություն վերապահելու մասին որոշման հիմնավորումը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2019 թվականի տարեկան գործունեության հաշվետվությանը:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարին Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին հատկացված բյուջետային միջոցների շրջանակում տնտեսագիտական դասակարգման ներհոդվածային և մինչև 2 մլն ՀՀ դրամը չգերազանցող միջհոդվածային փոփոխություններ կատարելու լիազորություն վերապահելը:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ մինչև 2020 թվականի փետրվարի 4-ը Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի էլեկտրոնային հասցեին ստացվել են Խորհրդի 9 անդամներից 8-ի կողմից ուղարկված «կողմ եմ» բառերը և Պ. Խաչատրյանի կողմից «դեմ եմ» բառերը:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ վերոնշյալ ժամանակահատվածում ստացվել է Խորհրդի 9 անդամներից 8-ի կողմից ուղարկված «կողմ եմ» բառերը և Ա.Պողոսյանի կողմից «դեմ եմ» բառերը:

ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետի համաձայն հեռակա քվեարկությունը համարվում է կայացած:

Խորհրդի անդամներ Ս.Պապիկյանի, Ա.Ասոյանի, Ա.Պողոսյանի, Ա.Ավանեսյանի, Պ.Խաչատրյանի կողմից ներկայացվել են կարծիքներ, որոնք ընդունվել են ի գիտություն և կցվում են սույն արձանագրությանը:

Ա.Ասոյանի հատուկ կարծիքի հիման վրա օրակարգի 2-րդ հարցը վերաշարադրվեց նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ.՝

«Հարց 2. Թույլատրել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարին մինչև 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով բյուջեով նախատեսված պահպանման ծախսերում, ծրագրերում և բյուջետային հատկացումների հաշվին պետական կարիքների համար գնումների անվանացանկում և գնումների պլանում կատարել փոփոխություններ և դրանք ներկայացնել համապատասխան շահագրգիռ կողմերին՝ առանց խորհրդի լրացուցիչ համաձայնության:»:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո խորհուրդը որոշեց՝

1. հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2019 թվականի տարեկան գործունեության հաշվետվությանը՝ **8 կողմ, 1 դեմ ձայնով:**

2. Թույլատրել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարին մինչև 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով բյուջեով նախատեսված պահպանման ծախսերում, ծրագրերում և բյուջետային հատկացումների հաշվին

պետական կարիքների համար գնումների անվանացանկում և գնումների պլանում կատարել փոփոխություններ և դրանք ներկայացնել համապատասխան շահագրգիռ կողմերին՝ առանց խորհրդի լրացուցիչ համաձայնության՝ **8 կողմ, 1 դեմ ձայնով:**

Խորհրդի նախագահ **Էրիկ Գրիգորյան**
(ՀՀ շրջակա միջավայրի նախարար)

Քարտուղար՝ **Կարո Միքայելյան**